ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում պատմության ուսուցչի (14 դասաժամ) և անգլերենի ուսուցչի (4 դասաժամ) թափուր աշխատատեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձնագիր,
4) աշխատանքային գրքույկ,
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019 թվականի հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2019 թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 15:00-ին Ծակքարի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծակքար:

Տեղեկությունների համար զանգահարել 094-21-70-46 հեռախոսահամարով: